ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024Թ ԲՅՈՒՋԵԻ 04.01.2024Թ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ

Քննարկումն իրականացնող՝ ՀՀ, Տավուշի մարզի, Իջևանի համայնքապետարան

Քննարկման վայր՝ Իջևան համայնքի ,,Վերնատուն,, ՓԲԸ

Իջևան համայնքի ավագանու նիստերի դահլիճ

Հանրային քննարկման թեման՝ Իջևան համայնքի 2024թ բյուջեի նախագիծը

Զեկուցող՝ Արտեմ Ոսկանյան

Հանրային քննարկումը վարեց՝ Իջևան համայնքի ղեկավար Արթուր Ճաղարյանը:

Հանրային քննարկման քարտուղար՝ Մերինե Մանուչարյան

Հանրային քննարկմանը մասնակցեցին՝ Իջևան համայնքի աշխատակազմի աշխատակիցներ, բնակավայրերի վարչական ղեկավարներ, համայնքի ավագանու անդամներ և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Համայնքապետարանի ֆինանսատնտեսական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Արտեմ Ոսկանյանը նշեց, որ համայնքի 2024թ բյուջեի նախագիծը, հիմնավորումը և համայնքի ղեկավարի ուղերձը հանրային քննարկման նպատակով 20.12.2023թ տեղադրվել է համայնքապետարանի կայքում: Անցած 15 օրվա ընթացքում բյուջեի նախագծի վերաբերյալ առաջարկություններ, դիտողություններ թղթային կամ առցանց եղանակով չեն ստացվել:g Նա համառոտ ներկայացրեց 2024թ բյուջեի նախագիծը, ծախսերն ու եկամուտները, նախորդ տարվա հետ համեմատած նախատեսվող փոփոխությունները, սպասվելիք արդյունքները:

Հանրային քննարկման ընթացքում մասնակիցների կողմից հարցեր, առաջարկներ չբարձրացվեցին և համայնքի 2024թ բյուջեի նախագիծը համարվեց հավանության արժանացած:

Հանրային քննարկման քարտուղար՝

Իջևանի համայնքապետարանի աշխատակազմի
քարտուղարության, անձնակազմի կառավարման
և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Մերինե Մանուչարյան